Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3886

Հանգամանքները
Ներսիսի Գ. Զարեհյանց
գրաբար-արևելագիտ. հիմքերը.
ցեղերության

02
Ն-91

բաղրիկ
1902

02-65

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.С.Р. Публичная Библиотека
7/31 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Ուրմիի Գ. ԶԱՆՇԵԱՆ Գրագրական — Ընթերցարանական Ընկերութեան։

ՀԻՄՆԻԱԾ

1901 Յուլիս 26-ին։

1902

ԹԱՒՐԻԶ

02
Ու-91

Տպարան Թաւրիզու Հայոց Արամեան Դպրանոցի

2010

№ 2001

02
Ոհ-91
9575

370
1994-ԿԱ

Գ. Ջանշեան Ընկերութեան Հիմնադրութեան համար Տ. Օտեանի կոչի պատճէն

Ուրբերի Հայր Գ. ՋԱՆՇԵԱՆԻ յիշատակին

Այսօրուանից ճիշտ մի տարի առաջ - 1900 Յուլիսի 26 - ին. Հայ որբերի Հայր - անմոռանալի Գր. Ջանշեանը մեռաւ։ Ամբողջ Հայ ազգը ողբաց այդ թանկագին կորուստը, նոյն իսկ օտարները սգացին այդ մահը և, հոգեհանդիստներ կատարեցին, նրա անջնջելի յիշատակին։ Հրատարակութիւններ նուիրեցին։ Միայն մենք, Ուրմիում գտնուող Հայերս չ՝յիշեցինք ՄԵԾ մարդուն, չճանաչեցինք մեր որբերի բարերարին։

Յարգելի Պարոններ, ազգային գործիչներին Ժպտալ, յիշել ամէն մի Հայի Ս. պարտքն է. պաշտելի ՋԱՆՇԵԱՆԸ այդ հաղարաւոր մեծերից մէկն է։ Եկէք մենք էլ ճանաչենք մեր պարտքը, յարգենք նրա յիշատակը մի համակրելի գործով։— Ահա՝ Շեղ համակրելի գործ։

Բոլորդ էլ գիտէք որ Ուրմիում գրագարան - ընթերցարան չկայ, որ Ուրմի գաւառի Հայերը զուրկ են ընթերցանութեան միջոցներից։ Բոլորդ էլ ճանաչում էք այս հաստատութեան կարևորութիւնը և գգում ընթերցանութեան պահանջ. Ուրեմն, եկէք հիմնենք մի ընկերութիւն, լոյս տարածենք, և այդ ընկերութիւնը նուիրենք պաշտելի Գրիգոր Ջանշեանի անուան։

1901 Աուլիս 26 - ին
Ուրմի

Տիգրան Օտեան

Գ. Ջանչեան Ընկերութեան հիմնադիրներ.—

1. Գէորգ Քահանայ Օտեան
2. Յակոբ Կ. Աւագեան
3. Ջ. Մհ. Գուլօեան
4. Արամ Տէր Եսայեան
5. Տ. Շահգեալդեան
6. Ռուբէն Բաբախանեան
7. Փ. Շահրուզաղեան
8. Վահան Տէր Յովհաննէսեան
9, Յովսէփ Յովսէփեան
10. Մհ. Օհանէս Մհ. Սահակեան
11. Գէորգ Պ. Մարկոսեան
12. Մ. Շահբաղեան
13. Դէորդ Մհ. Կարապետեան
14. Մ. Շահրուզաղեան
15. Միհրան Բաղդասարեան
16. Նշան Օտեան
17. Բաղրատ Գալաֆեան
18. Ստեփան Տէր Օհաննէսեան
19. Մաթէոս Օջաղեան
20. Յարութիւն Մատթէոսեան
21. Օր. Թօխմախեան
22. Հ. Հասրաթեան
23. Վ. Ղուկասեան
24. Արզար Յարութիւնեան
25. Լեոն Մելիք Յակոբեան

Հաստատելով սոյն կանոնագրութիւնը յաւելմամբ երկու յօդուածների դարձուցանեմք ի գործադրութիւն։

Առաջնորդ Ե. Ծ. Վ. Մուրադեան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Ուրմիի Գ. ՋԱՆՉԵԱՆ Գրադարան - Ընթերցարանական Ընկերութեան։

Հիմնուած 1901 Յուլիս 26-ին։

I ԴՊԱՏԱԿ

1 Ուրմիի Գ. Ջանչեան Գրադարան — Ընթերցարանական ընկերութեան նպատակն է։ — Ընթերցանութիւն տարածել Ուրմի գաւառի հայ ազգաբնակութեան մէջ։

II ՄԻՋՈՑՆԵՐ

1 Այս նպատակն իրագործելու համար ընկերութիւն պիտի հիմնէ - Գրադարան - Ընթեր-

ցարաններ։ Պիտի կազմակերպէ **ՁՐԻ** և հանրամատչելի դասախօսութիւններ։

2 Ընկերութիւնը իր նիւթականը պիտի հայթայթէ անդամների տարեկան վճարներից, նուիրատուութիւններից։ Պիտի կազմակերպէ վիճակախաղ, երեկոյթ և ներկայացումներ, ներկայացումների զուտ արդիւնքի 1/3 ը պատկանում է Ուրմի քաղաքի հայոց դպրոցին։

3 Ընկերութիւնը պարտաւոր է տարեկան հաշիւ ներկայացնել Աստրպատականի թեմական խորհրդին։

4 Դրադարանի համար ժողովարարութիւն անելու բոլոր մատեանները պէտք է վաւերացրած և ժապաւինուած լինին նոյն Առաջնորդարանական խորհրդի կնքով և անդամոց ստորագրութեամբ։

III ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

1 Ընկերութիւն բաղկանում է բուն (տարեկան) և պատուոյ անդամներից։

2 Բուն անդամներ վճարում են տարէն վեց դրան միանուագ, և մասնակցում են ընկերութեան բոլոր գործերին։ Անդամակցութիւնը ազատ։

3 Այն անձինք՝ որոնք ընկերութեան նուիրում են առնուազն հինգ թուման (միանուագ) և կամ մի գնահատելի ծառայութիւն են անում, ընկերութեանս պատուոյ անդամ կընտրուին։

4 Ոչ մի անդամ և ոչ ոք, թէ նէ դէպքում էլ որ լինի իրաւունք չունի իր ուած կամ նուիրած գրամ, դիրք և այլն յետ պահանջելու։

5 Այն անդամները որոնք ընկերութեան դէմ մի անհաւատարմութիւն են գործում, կամ կանոնագրութեան հակառակ վարուում, անդամների մեծամասնութեան հաւանութեամբ հեռացնում են ընկերութիւնից։

IV ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

1 Վարչութիւն կազմում են. Նախագահ, Փոխարտուղար, Գանձապահ և երկու խորհրդականներ։ Սրանք ընտրում են բուն անդամների քուէով ընդհանուր ժողովում, մի տարի ժամանակով։

2 Վարչութիւնը պարտաւոր է ընկերութեան գործերը վարել ըստ կանոնագրութեան։

3 Վարչութիւնը պարտաւոր է իր գործունէութեան տեղեկագիր ներկայացնել ընդհանուր ժողովին, վեց ամիս մի անգամ, որը հաստա-

տելուց յետոյ պարտաւոր է հրատարակել լրագիր-ներում։

4 Վարչութիւնը պարտաւոր է ամէն տարի Գ. Ջանշեանի մահուան տարեդարձի օրը — Յուլիսի 26-ին հոգեհանգիստ և հանդէս կատարել։

5 Վարչութեան անհոգութիւնից առաջացած վնասները, ինք-վարչութիւնն է տուժում։

6 Վարչութեան փոփոխումը - ժամանակից դուրս կարող է լինել բուն անդամների մեծամասնութեան քւէով։

V ԿԵՆՏՐՈՆ

1 Ընկերութեան կենտրոն մշտապէս Ռուսիի քաղաքն է։

VI ԺՈՂՈՎՆԵՐ

1 Ժողովներ երեք տեսակ են լինում, Ընդհանուր, վարչական և հասարակական։

2 Ընդհանուր ժողովը լինում է տարին երկու անգամ, Յունուար և Օգոստոս ամիսներին, երբ Ռուսիի դտնուող բուն անդամների կէսը ներկայ է լինում։

3 Ընդհանուր ժողովը կունենայ առանձին դիւան։

4 Վարչութեան հրաւէրով կարող են տեղի ունենալ և արտակարգ ընդհանուր ժողովներ։

5 Վարչական ժողովներ տեղի կունենան ամիս մի անդամ։

6 Հասարական - ընթերցանութեան ժողովներ, շաբաթը երկու անդամ։

7 Թէ ընդհանուր և թէ վարչական ժողովներից բացակայ դտնուող անդամներ, իրաւունք չունին կայացած վճիռներ չընդունելու։

VII ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

1 Օտար քաղաքներում և երկիներում, ընկերութեան գործակալներ ընտրում և հաստատում է վարչութիւնը։

2 Գործակալներ պարտաւոր են իրանց մօտ հաւաքւած նւէրների (գիրք, դրամ և այլ) մասին վեց ամիս մի անդամ մանրամասն հաշիւ տալ ընկերութեան վարչութեան։

VIII ՅԱՒԵԼԻՍԱԾ

1 Եթէ Ջանշեան ընկերութիւնն չունե-

նոյ երեք բուն անդամներ լուծուած է համարուում, այս դէպքում ընկերութեան բոլոր գոյքը մնում է Ուրմի քաղաքի հայոց դպրոցին, Պարպատականի հայոց հոգևոր կառավարութեան գիտութեամբ:

2 Ժամանակի ընթացքում կարող է բարեփոխութեան ենթարկուել ընկերութեան կանոնագրութիւնը, առանց փոխելու ընկերութեան նպատակը և անունը:

ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

1 Դրադարան — ընթերցարանից ձրի առպէս օգտուում, տարեկան, պատուոյ և բաժանորդ անդամներ և դպրոցի աշակերտներ:

2 Բաժանորդ անդամներ վճարում են ամսէն 10 շահի:

3 Գրքեր տրուում են 10 օրով՝ աւել պահած իւրաքանչիւր օրուան համար 1 շահի տուգանք են վճարելու:

4 Լրագիրներ և ամսագիրներ ընթերցողներին, տուն տանելու համար, միմեայն հեռաւոր համարներ ստացուելուց յետոյ կը տրուին:

5 Իւրաքանչիւր գիրք կամ լրագիր փչացնող և կորցնողը պիտի վճարէ նրանց կրկին արժէքը:

ԳՐԱԴԱՐԱՆԱՊԵՏ

1 Գրադարանապետը Վարչութիւնից ցուցակով ստացած գրքերի փչանալուն՝ պատասխանատու է:

2 Գրադարանապետը պիտի պահէ գիրք ստացողների ցուցակը:

3 Գրադարանապետը պարտաւոր է, որոշուած օրերին անպայման բաց անել ընթերցարանը, և հսկել կարգապահութիւն պահպանելու համար:

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

1 Ընթերցարանը բաց է լինում շաբաթ 2 անգամ, (երեկոյեան 4 — 7 ժամ,) մուտք ձրի է և ազատ:

Վարչութիւն Գ. Ջանչեան Ընկերութեան

Նախագահ՝ Միհրան Բաղդասարեան
Գանձապահ՝ Յովսէփ Յովսէփեան
Խորհրդականք՝ Վահան Ղուկասեան, Էրամ ՏէրՅակեան
Քարտուղար՝ Տիգրան Օ[illegible]

Հ.Ս.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Հ. Պետական Գրադարան
7/XI 1922
Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ԱՆՎԱՆ

19 MAR 1902

0019639

3886